

Համարը N 414 Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004	Տեսակը Մայր Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Ստեփանակերտ Ընդունման ամսաթիվը 16.11.2004 Ստորագրման ամսաթիվը 16.11.2004 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը
--	---

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶԿԼԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 414

ք.Ստեփանակերտ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 32-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

Հաստատել **ձկնային** տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐՉԱՊԵՏ

Ա.ՂԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2004թ. նոյեմբերի 16-ի
թիվ 414 որոշման

Կ Ա Ր Գ

ԶԿԼԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում **ձկնային** տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման գործառնությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացությունն ունի հետևյալ իմաստը՝
տնտեսություն՝ արդյունագործական ձկնորսություն, ապրանքային ձկան, ձկնամատղաշի, այլ ջրային կենդանիների բուծման գործունեության իրականացման միջոցառումների և /կամ/ կառուցվածքների ամբողջություն:

3. **Ձկնային** տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսները կարող են օգտագործել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո:

4. Ջրային համակարգերն օրենքով սահմանված կարգով կարող են օգտագործվել ձկնատնտեսական նպատակներով դրանց սեփականատիրոջ համաձայնությամբ և պայմանագրային հիմունքներով՝ սույն կարգի 3-րդ կետով սահմանված պայմանի բավարարման դեպքում:

5. **Ձկնային** տնտեսության կողմից իրականացվող ջրօգտագործումը չպետք է խանգարի կամ խոչընդոտի այլ տնտեսվարող սուբյեկտների գործունեությանը:

6. **Ձկնային** տնտեսությունների ջրօգտագործումը պետք է բացառի ստորերկրյա ջրերի մակարդակի փոփոխությունը, տեղանքի ճահճացումը կամ չորացումը:

7. Ձկնատնտեսական նշանակության ջրային օբյեկտների ցանկը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

8. Ձկնատնտեսական նշանակության ջրային օբյեկտներից իրականացվող ջրառը պետք է պարտադիր կահավորված լինի ձկնարգելքով:

9. **Ձկնային** տնտեսության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործումն ամանց արհեստական կառույցների թույլատրվում է միայն տվյալ ջրաէկոհամակարգին բնորոշ ձկնատեսակների բուծման պայմանով:

ԼՂՀ կառավարության աշխատակա
զմի
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան